ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» 10 2010թ. N: 152 ք.Գյումրի

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 194-Ն,Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26-ի թիվ 32-Ն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 5-Ն,Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 1-Ն,Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ 323 և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012 թվականի ապրիլի 04-ի թիվ 1-Ն համատեղ հրամանով հաստատված «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» հանրապետական մրցույթի անցկացման կարգ»-ի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» հանրապետական մրցույթի Շիրակի մարզային մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Վաչագան Վարդանյանին՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 30-ը սահմանված կարգով ամփոփել մրցույթի մարզային փուլի արդյունքները և հաղթողների վերաբերյալ համապատասխան արձանագրությունը ներկայացնել հաստատման:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2012 թվականի 15.10 N152 կարգադրության

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վարդանյան Վաչագան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ, նախագահ,
Մկոյան Մարտին	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային վարչության պետի տեղակալ, անդամ,
Ղազարյան Կարեն	ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի թիվ 5090 զորամասի հրամանատարի տեղակալ, անդամ,
Նահապետյան Լեոնիդ	ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի իրավախորհրդատու, անդամ,
Մարտիրոսյան Սամվել	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
Բաղդասարյան Արմեն	ՀՀ ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության աշխատակից, անդամ,
Ավետիսյան Շանթ	ՀՀ պաշտպանության նախարարության Գյումրու զինվորական կոմիսարիատի հաշվառման բաժանմունքի տեսուչ, անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ